

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891-710
v-22

ՄՈՒԱԿԻ ՅԵՎ ԱՐՁԻ ՄԱՍԻՆ



Խ. Ա. Հ. Ա. ԺՈՂՈՎՐԴՅԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՅԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ

1926

PF6 Nov 2008

№ 5. ԽՈԲՀՇՎԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԳՐԱՎՔ Ա 5

891.71-93

U-99

WY

Դ. ՄԱՄԻՆ-ՍԻԲԻՐՅԱԿ

ՄՈՇԱԿԻ

ՅԵՎ

U. P. D. H.

ՄԱՍԻՆ


Д. МАМИН-СИБИРЯК. СКАЗКА ПРО КОМАРА И МИШКУ

На армянск. яз.

ՄԱՆԿԱԿԱՆ ՀԵՔԻԱԹ

1001
1001

Թարգմանություն ԱՄԵՐԻ



Центральное Издательство Народов Союза С. С. Р.
Москва, Никольская, 10.

ՍԽՀՄ ԺՈՂՈՎՐԴԻՇԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍԻՎԸ

1926



Կլիշեները տրամադրել և Գ. Յ. ՄիլիՄԱՆՈՎԻ հրատարակությունը.

ՄՈԾԱԿԻ ՅԵՎ ԱՐՁԻ ՄԱՍԻՆ

I.

Այս դեպքը պատահեց հենց կեսորին, յերբ շոգից բոլոր մոծակները թագ եյին կացել ճանիճը։ Յերկար քթանի Մոծակ Մոծակյանը ծվարել եր մի լայն տերեկի տակ ու քնել, յերբ հանկարծ աղաղակ լսվեց։

— Վայ, հասեք... Վայ, ոգնեցեք...

Մոծակ Մոծակյանը դուրս թռավ տերեկի տակից ու ձայն տվեց։

— Ի՞նչ ե պատահել... Ի՞նչ եք բղավում։

Իսկ մոծակները թռչկոտում եյին, բզզում, տզտղում, — վոչինչ չեր կարելի հասկանալ։

— Վայ, հասե՞ք... Մի արջ մտավ մեր ճահիճը ու փովեց քնեց: Խոտի վրա հենց պառկեց թե չե՛տակով արավ հինգ հարյուր մոծակ, հենց վոր շունչ քաշեց՝ կուլ տվեց մի հարյուրը: Վայ, ես ի՞նչ փորձանք ե, ախալե՛ր: Մենք հաղիվ մեր պոչերը պրծացրինք, թե չե՛բոլորիս կջարդոտեր:



Յերկար քթանի Մոծակ Մոծակյանը շատ չարացավ թե՛ արջի վրա, թե հիմար մոծակների, վորոնք ծվկում եյին իզուր:
— Ե՛յ, հերիք ե ծվկաք, — բղավեց նա,
— այ, հիմա յես կգամ և իսկույն դուրս կանեմ արջին... Իսկ դուք իզուր տեղը միշայն բղավել գիտեք...

Մոծակ Մոծակյանը չարացած՝ թուավ: Ճիշտ վոր ճահճում պառկել եր մի արջ: Մտել եր խոտերի հենց խիտ տեղը, ուր պապենական ապրում եյին մոծակները: Նա փովել եր ու փնչում: Միայն խոմֆոցի սուր ձայնն եր գալիս, ասես մեկը շվվացնելիս լիներ: «Այ քեզ անխիղա արարած... Մտել ե ուրիշի տունը, ուրիշ տեղը զավթել, եսքան մոծակ փչացրել ու անուշ քուն մտել»...

— Ե՛յ, քեռի, եղ ուր ես մտել, — բղավեց Մոծակյանը անտառովը մեկ, ու ենպես բարձր, վոր մինչև անդամ ինքն ել վախեցավ:

Բրդոտ Քոթոթը մի աչքը բացեց — վոչ վոքի չտեսավ, մեկելն ել բացեց, հաղիվ նկատեց, վոր մի մոծակ թուչկոտում ե հենց իր քթի վերել:

— Ի՞նչ ես ուզում, բարեկամ, — վինթինթաց Քոթոթը ու ինքն ել սկսեց չարանալ: — Թյո՛ւ, հենց նոր եյի աչքս փակել... Վորտեղից դուրս պրծավ ես անպիտանը... սրա ծվծվոցը զանլաս տարավ...

— Ե՛յ, քեռի, քեզ հետ եմ. քեզ ասում եմ՝ քո կամքովը վեր կաց գնա:

Քոթոթը ջուխտ աչքով մտիկ տվեց ես հանդուզն մոծակին, վինչաց ու խիստ չարացավ:

— Ի՞նչ ես ուզում, անպիտան, — գոռաց նա:

— Հեռացի՛ր, ես մեր տեղն ե, թե չե յես հանաք չեմ սիրում... Ձես քեզ կուտեմ, եղ քո քուրքն ել հետը:

Արջի ծիծաղը յեկավ: Նա շուռ յեկավ մյուս կողքի վրա, դունչը խրեց թաթերի մեջ ու նորից սկսեց խոմփացնել:

II

Մոծակ Մոծակյանը թուավ գնաց իր ընկեր մոծակների մոտ ու սկսեց ճահճովը մեկ պարծենալ.

— Ե՛յ, լավ վախեցրի բրդոտ Քոթոթին... Ուրիշ անդամ ել չի գա...

Նրա շուրջը խոնվեցին մոծակները ու հարցնում եյին.


— Բա հիմա ու՞ր ե արջը:

— Գնացի՛ գտա այդ անիրավին: Սաստիկ վախեցավ՝ յերբ յես նրան ասացի, վոր կուտեմ՝ յեթե չգնա: Հո գիտե՞ք՝ հանաք չեմ սիրում, եղպես ել երեն ասացի՛ կուտե՛մ: Վախենում եմ թե նա ահից հոգին տված լինի՝ մինչև իմ այստեղ հասնելը... Դե ի՞նչ անեմ, ինքն ե մեղավորը:

Մոծակները տղազում եյին, բզզում ու յերկար վիճում, թե ի՞նչ անեն այդ տգետ գաղանի հետ: Ճահճում դեռ այդպես աղմուկ

Հեր բարձրացել։ Տզգացին, տղտղացին ու վորոշեցին արջին դուրս
անել ճահճից։

— Թող գնա իր տունը, անտառում քնի. իսկ ճահիճը մերն ե։



Մի պառավ մոծակ խորհուրդ տվեց արջին հանդիսատ թողնել։
— Թող պառկած մնա, յերբ քունը կառնի՝ կվերկենա ինքը
կդնա։

Բայց նրա վրա մոծակներն այնպես հարձակվեցին, վոր խեղճը
հազիվ կարողացավ թագնվել։

— Գնա՞ք, մի՛ վախենաք... — ամենից շատ բղավում եր Մո-
ծակ Մոծակյանը. մենք նրան ցույց կտանք...։

Մոծակները թռան Մոծակ Մոծակյանի յետելից։ Թոչում եյին
ու տղղում, մինչև անգամ իրենք ել սարսափում իրենց ձայնից։
Յերբ մոտեցան, տեսան՝ արջը անշարժ պառկել ե։

— Յես այդպես ել կարծում եյի, խեղճը ահից մեռել ե...
— պարձեցավ Մոծակ Մոծակյանը, — մինչև անգամ մեղքս գալիս ե,
տեսեք ի՞նչ ահազին արջ ե...։

— Մեռած չե, քնած ե, — ծվվաց մի փոքրիկ մոծակ, վորը
թռել եր արջի քթի մոսով ու քիչ եր մնացել, վոր կուլ գնար
քթածակով։

— Ա՛յ դու անամո՛թ. այ անխիղջ... — ծվվացին բոլոր մոծակ-
ները միաբերան ու մի սոսկալի աղմուկ բարձրացավ։ — Հարյուր



մոծակ ճիւլել ե, հարյուր մոծակ կուլ տվել, իսկ ինքը քնել,
կարծես բանից խաբար չի...։

Իսկ բրդուա Քոթոթը քնել եր ու քթովը շվվացնում...։

— Նա քնած է ձևանում,—բղավեց Մոծակ Մոծակյանը ու
թռավ արջի վրա:—Այ, հիմա յես նրան ցույց կտամ...

— Եյ, քեռի՛, հերիք է քնած ձևանաս:

Նա թռավ թե չե՛ իր քիթը խրեց արջի քթածակը: Քոթոթը ցա-
վից վեր թռավ, թաթերով քիթը ճանկեց, բայց Մոծակ Մոծակյանը
արդեն ծլկվել եր:



— Ի՞նչ է, քեռի, դուր չեկավ,—ծվվաց Մոծակ Մոծակյանը
արջի գլխավերեկից,—հեռացի՛, թե չե՛ վատ կինի... Յե՞ Մոծակ
Մոծակյանս—յերկար քթանիս—հիմի յես մենակ չեմ. յեկել ենք
տնով տեղով՝ ամրող ցեղով. վո՞նց պիտի մեզ դիմանաս: Հեռացի՛ր,
ասում եմ, քեռի՛...



— Իսկ յես գնացողը չեմ, — բղավեց արջը՝ կանգնելով յետելի թաթերի վրա, — յես ձեզ բոլորիդ կջարդեմ...



— Ե՛, քեռի՛, իզուր ես պարծենում...

Նորից թռավ Մոծակ Մոծակյանը և կպավ արջի ուղղակի աչքին։ Արջը ցավից մոռաց, թաթով տրորեց մոռւթը, բայց ելի թաթովը բան չընկավ, ու քիչ եր մնացել, վոր յեղունկով իր աչքը հաներ։ Իսկ Մոծակ Մոծակյանը պտույտ եր գալիս արջի ականջի շուրջը և տղղում։

— Յես քեզ կուտե՛մ, յես քեզ կուտե՛մ, քեռի...

Քոթոթն ել չհամբերեց։ Նա պոկեց ծառի մի մեծ ճյուղ և սկսեց մոծակներին թակել։ Թակում եր՝ ինչքան թերումը ուժ կար... Թակեց, թակեց, մինչև վոր հոգնեց, բայց վոչ մի մոծակ

սպանել չկարողացավ, բոլորը պտտվում, ազտղում եյին նրա շուրջը։ Այն ժամանակ Քոթոթը վերցընց մի մեծ քար ու զցեց մոծակների վրա, — ելի բան դու ըս չեկավ։



— Հը՛, կարողացա՞ր մի բան անել, քեռի, — ծվաց Մոծակ Մոծակյանը։ Իսկ յես՝ միենույն ե՛ քեզ կուտեմ, յեթե չհեռանաս։

Քոթոթը շարունակ կովում եր մոծակների հետ. սաստիկ աղմուկ եր։ Արջի մանչոցը հեռվից լսվում եր։ Իսկ ինչքա՞ն նա ծառեր պոկեց, ինչքան քարեր շպրտեց... Արջը շարունակ աշխատում եր խփել Մոծակ Մոծակյանին։ Նա արջի ականջի մոտովը հենց անց եր կենում թե չե՛ արջը թաթը զցում եր նրան բռնելու, բայց բան չեր դուրս գալիս. իզուր տեղը իր մոռւթն եր արնոտում։

Վերջապես Քոթոթը ուժից ընկավ։ Նա նորից յետելի թաթերի վրա նստեց, փնչաց ու մտածեց մինոր բան անել։ — «արի՛ թափալ տամ խոտերի մեջ, վոր մոծակների թագավորությունը միանդամից գետնին հավասարեցնեմ»։ Քոթոթը թափալ տվեց, թափալ տվեց, բայց դրանից ել բան դուրս չեկավ, միայն ինքը ավելի հոգնեց։ Այն ժամանակ արջը մոռւթը թագցրեց մամուռների մեջ, — դրանից ավելի՛ վատ յեղավ։ Մոծակները կպան ր' ըջի պոչին։ Ես անդամ սաստիկ կատաղեց արջը։



— Կացե՞ք, հիմա ձեզ ցույց կտամ, — մոնչաց նա այնպես, վոր հինգ վերստի վրա ձայնը լսվեց։ — Յես ձեզ ցույց կտամ… յես… յես… յես…

Մոծակները յետ քաշվեցին ու սպասում եյին, թե ի՞նչ կարող է լինել։ Իսկ Քոթոթը բարձրացավ ծառը, նստեց ամենահաստ ճյուղին և սկսեց բղավել։



— Ապա, կարող եք՝ մո՛տ յեկեք… կջարդե՛մ ձեր բոլորիդ քթերը…

Մոծակները սկսեցին դիլ ձայնով ծիծաղել, ու թափվեցին արջի վրա արդեն բոլորը միասին։ Տղզում, պտույտ են գալիս, մըտնում արջի քեթը… Արջը պաշտպանվում եր հա պաշտպանվում։ Նա կուլ տվեց մի հարյուր մոծակ, հազար ու ենպես ուժով ցած ընկավ ճյուղից, վոնց վոր մի գունդ… բայց ելի վեր կացավ, քորեց ցաված կողքը, ու ասաց։

— Հը, վո՞նց եք, տեսա՛ք ինչ չնորհքով ցած թռա ծառից…

Մոծակները ավելի սկսեցին ծիծաղել, իսկ Մոծակ Մոծակվա-
նը եղի իրն եր կրկնում.

— Յես քեզ կուտե՛մ... յես քեզ կուտե՛մ...



Արջը բոլորովին ուժից ընկավ, բայց ամաչում եր ճահճից
հեռանալ: Նստեց յետեկի թաթերի վրա ու սկսեց աչքերը տրորել:

Նրան դժվար դրությունից հանեց գորտը: Նա դուրս պղծավ
քարի տակից, նստեց յետեկի թաթերի վրա ու ասաց.

— Քոթոթ, ինչու իզուր տեղը քեզ անհանգստացնում ես: Ուշ-
զլություն մի դարձրու այդ անպիտան մոծակներին: Զարժի...

— Ի հարկե չարժի, —ուրախացավ արջը, —յես հենց ենպես...
ապա թող փորձեն դրանք իմ բունը գալ — յես... յես...

Քոթոթը շուռ յեկավ՝ ու եղ եր — սկսեց փախչել ճահճից,
իսկ յերկար քթանի Մոծակ Մոծակյանը ընկավ յետեկիցն ու ճշում եր.

— Բոնե՛ք, հե՛յ, բոնե՛ք, արջը փախչում ե... բոնե՛ք...

Հավաքվեցին բոլոր մոծակները, խորհուրդ արին ու վորոշե-
ցին. — «Զարժի, թող գնա կորչի, — ճահճը հո մե՛զ մնաց»:

Վ Ե Բ Զ



ՄԱՆԿԱԿԱՆ

ԼՐԱՑՄ ԵՆ ՏԵՍԱՅԻ

1. ՆԵՎԵՐՈՎՎ—Ի՞նչպես ելին ապրում տիկնիկները:
2. ՄԱՄԻՆ-ՄԻԲԻՌՅԱԿԻ—Արջի և մոծակի մասին:
3. ԿՈՒՊՐԻՆ—ՅԵՐԿՐԻ Խորքերում:
4. ՈՐԼՈՎԻՑ—Ճամբորդություն այերոպալանով:
5. ՈՐԼՈՎԻՑ—Կուզկա-քիմիկոսը:
6. ԿՐԱՎՋԵՆԿՈ—Թե ինչպես Սաքոն կարմիր-բանակային դարձավ:
7. ՖԱՔՍ—Մինիստը մեկ ժամով:

ՏՊԱԳՐՈՒՄ ԵՆ

8. ԽԼԵԲՆԻԿՈՍ—Կարմրամորթները:
 9. ՌԻԺԿՈՎ—Պատասի պիոները:
 10. ԱՂԱՅԱՆ Դ.—Հեքիաթներ:
-

ԼԵԿԵԿՆՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Լույս են տեսել.

ԼԵՆԻՆ. —Պատգամներ յերիտասարդության.

ՍՈՅ-ՔԱՆԱՔԱԿԱՆ ԸՆՐՔ
Լույս են տեսել.

ՍՏԱԼԻՆ. —Գյուղացիական հարց.

Ն. ԵԼԻԶԱՐՈՎ. —Ի՞նչ փորշեց կուսակց. XIV համագումարը:
ԿՈՄԻ. ՅԵՏԻՆ. —(Կենսագրությունը).

ԳՅՈՒԴԱՑԻԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Լույս են տեսել.

ԼԻՎԻՆՍԿԻ. —Գյուղատնտեսական հարկ.

ՊՈԴՅԱՊՈԼՍԿԻ. —Աստծու կամքը թե՝ գյուղատն. գիտությունը.

ՅԱԶՎԻՑԿԻ. —Մարդկային բնակարանի պատմությունը.

ՎԼԱՌՈՎ. —Հողի մշակումը յերաշտի ժամանակ.

ԴՄԻՏՐՅԵՎԱ. —Տգիտությունը և սնանակատությունը.

ԳՈՒԳԼԻՆ. —Փորող փայտից մինչեւ տրակոր:

Լ. ԻՅՈԶԵՖՈՎԻՉ. —Գեղ կանգնի գերան կկոտրի (կոռպեր. մասին).

ԲՐԱՆՍԲՈՒՐԳ. —Ըստ. կենդանիների վար. հիվանդութ.

ՍԿՈՄՈՐՈԽՈՎ. —Լին ոգնությունը հիվանդ կենդան.

ԿՐԱՎՋԵՆԿՈ. —Թե ինչպես կարելի յե գյուղում ելեքտրականություն անցկացնել.

ԱՊՈՂՅՈՎԱՅՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Լույս են տեսել.

ՈԵՄԱՇԿՈ. —Թոքախտ.

ՍՊԵՐԱՆՍԿԻ. —Մոր այրբենարանը.

ԲՐՈՆՆԵՐ. —Վեներական ախտեր.

ԳԻՆՍԲՈՒՐԳ. —Յերեխ. վարակիչ հիվանդութ.

ԽՈՐԴՐԻՎԵՏԻ ԳՐՈՅՑԻ ԳՐԱԾԱՔ
Լույս են տեսել.

ԵՍԻՊՈՎ. —Գյուղացիության պահանջները և խորհրդ. դպրոցի ծը-
րագիրը.

ԿՐՈՒՊԱԿԱՅԱ. —Լենինի պատգ. ժող. լուս. մասին.

ՏՅՈՒՐՅԱԿՈՒԼՈՎ. —Ազգային հարցը և դպրոցը.

ԺԱՎՈՐՈՆԿՈՎ. —Հասարակագիտությունը I աստ. դպրոցում.

ԿՐԱՎՋԵՆԿՈ. —«Թե ինչպես Սաքոն կարմիր բանակա»
(մանկ.-մէջին և բարձր հաս.),

ՖՈԿՍ. —«Մինիստը մեկ պատճեն»



ՈՐԼՈՎԵՅ. — «Ճամբորդություն այերոպլանով» (մանկակ., պատկերագր, միջ. հասակ):
 ՄԱՄԻՆ-ՍԻԲԻՐՅԱԿ. — «Մոծակի և արջի մասին» (մանկ., պատկերագր):
 ԿՈՒՊՐԻՆ. — «Ճերկղի խորքերում», (մանկ., պատկերագարդ, միջ. և բարձր հասակ):
 ՌՈՒԴԵՆ. — «Գիոներ, պահպանիր առողջությունդ».
 ՈՐԼՈՎԵՅ. — «Քիմիկոս կուզկան» (մանկ., պատկերագարդ, միջ. և բարձր հասակ):
 ՆԵՎԵՐՈՎ. — «Խաչպիս եյին ապրում տիկնիկները» (մանկական, պատկերագարդ):

Բ Ե Լ Լ Ե Տ Ր Ւ Ս Ի Կ Ա

Լույս են տեսել

Ա. ԳՈՐԿԻ. — Պատկերներ.

Ա. ՍԵՐԱՅԻՄՈՎԻՉ. — Պատկերներ.

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.